դուրս եկան, նա գրկոեցաւ հայր սուրբի հետ, համբուրեց նրա աջը: Երեւում էր, որ վանքի բազմաթիւ միաբանութիւնից մնացած այդ երկու ներկայացուցիչները հաշտ էին ապրում միմեանց հետ:

Արկղը տեղաւորեցին կառքի մէջ, ամէնքը նստեցին, եւ կառապանը բռնեց Մուշի ճանապարհը:

Պարոնն Ասլանն էր, որ այժմ կոչւում էր բժշկապետ Սասունեան, իսկ բարձրահասակ ամերիկուհին նրա կինն էր: Նա այն հարուստ այրի կնոջ դուստրն էր, որ Նիւ-եօրքում որդեգրեց Ասլանին, որի տանը ապրում էր նա իր ամբողջ ուսանողութեան ժամանակ: Այն ժամանակից սիրահարոեցաւ նա եւ խօսք տոեց պսակոել նրա հետ: Տարիներով միմեանցից անջատոելը չխախտեց նրանց սէրը: Օրիորդը ուխտել էր՝ միշտ սպասել նրան, մինչեւ կը վերջացնէր իր գործերը եւ կրկին կը վերադառնար Ամերիկա: Երբ վերջին անգամ Ասլանը գնաց Հնդկաստան, այնտեղ իր ընկերներից ստացած յանձնարարութիւնները կատարելուց յետոյ անցաւ Ամերիկա եւ պսակոեցաւ: Այժմ քաղաքային բժշկի պաշտօնով գնում էր Մուշ:

Մեր յիշատակարանը կատարոեցաւ որպէս մի նկարագիր, զանազան պատկերներով: Շատ անձնաւորութիւններ հանդիսացան եւ կրկին ծածկոեցան վարագոյրի ետեւում: Մենք առեցինք նրանց կեանքից եւ գործունէութիւնից յայտնի գծեր միայն: Եթէ բոլորի գործերը եւ նրանց գործունէութեան վախճանը լրիւ գրէինք, պէտք է մի երրորդ հատոր եւս աւելացնէինք: Ասլանով սկսեցինք մեր վերջին գիրքը եւ դարձեալ Ասլանով իջեցնում ենք վերջին պատկերի վարագոյրը: